ԹԵՄԱ 3. ՎԵՐԱՓՈԽՈՒՄՆԵՐԸ ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՄԻՋՈՑ XIX ԴԱՐՈՒՄ

§ 16. ՆԱՊՈԼԵՈՆՅԱՆ ԴԱՐԱՇՐՋԱՆԸ (1799–1815)

1 Նապոլեոն Բոնապարտը (1769–1821) ծնվել է Ֆրանսիային պատկանող Կորսիկա կղզում, մանր ազնվականի ընտանիքում: Ավարտել է Փարիզի ռազմական դպրոցը, 1785 թ. ծառայության անցել որպես հրետանու սպա: Նապոլեոնին կարելի է համարել ֆրանսիական հեղափոխության ծնունդ: 1793 թ. անգլիացիներից Թուլոն նավահանգստի ազատագրման համար նրան շնորհվեց գեներալի կոչում: 1795 թ. անխնա ճնշելով միապետության կողմնակիցների խռովությունը Փարիզում, Նապոլեոնը շահեց Դիրեկտորիայի լրիվ վստահությունը:

2 Նապոլեոն Բոնապարտը, անշուշտ, տաղանդավոր զորավար էր: Նրան բնորոշ էին առողջ դատողությունը, սառնասիրտ հաշվարկը, ամուր կամքը, համարձակությունը և նպատակասլացությունը: Նապոլեոնի ռազմական հաջողությունները ոչ միայն իր անձնական տաղանդի, այլև Եվրոպայի ավատատիրական պետությունների նկատմամբ Ֆրանսիայի բուրժուական հասարակության առավելության հետևանք էին: Ֆրանսիական բանակում զինվորական ծառայությունը պայմանագրային էր՝ 5 տարով, խրախուսվում էր նախաձեռնությունը և համարձակ որոշումներ կայացնելը: Նման ունակությամբ աչքի ընկած զինվորները ստանում էին սպայական աստիճան և կարող էին հասնել գեներալի /մարշալի կոչման:

3 Լյուդովիկոս XVII անունով արքա Ֆրանսիայում չի իշխել: Այդ անունը և տիտղոսը պետք է կրեր մահապատժի ենթարկված Լյուդովիկոս XVI-ի որդին, որը մահացավ բանտում պատանի հասակում: